



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36 ՌՆ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1887

ԹԻԻ 3902

ՄԱՐԱՊԵՏԻԱՆ ԿԸ ՏՐԱՏԱՐԱԿ-
ուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ
ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐՍԻՅԻ: Բաժա-
նորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ
համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝
քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար
70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 ֆը-
րանք: Բաժանորդագները ղրկելու է առ-
մատակարարութիւն Սրեւելքի եւ Սա-
սիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկ-
եան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն. Ազգային Կացութիւն:
Առակ, էջ Դժգոհ. (ՎԱՀԱՆ Վ. ՊԱՐՏԻՉԱԿՅԻ).
Հասակ Կաւկասիայէ. (ՍՐԱՉԱՅ).
Մարդկային բարեւոյս եւ լեզուք. (ՎԵՐՉ). (Խ. ՈՒ-
ՂՈՒՐԻԿԵԱՆ).
Գիտական Գործիք. (Մ. ԿՈՍԱՆՏԻՆԵԱՆ).
Վեպ. Հայաստանի բարքեր. Սիսակ եւ Սոսուհ, իը-
նութեան տիպիներ. (Գ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ).
Քաղաքի Շաբաթական Լրոյց. Արտաքին, Ներքին,
Ազգային:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 11 ԴԵԿՏԵՄԲ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆ

Շաբթուս ազգային գոհացուցիչ
դէպքն է Իզմիրի առաջնորդ Գեր. Մել-
քիսեղեկ Եպիսկոպոսի հրաժարումն
իւր առաջնորդական պաշտօնէն: Այ-
սու վերջ կը գտնէ ցաւառիթ կացու-
թիւն մը որ վերջերս մանաւանդ սուր
հանգամանք մ'առած էր եւ կ'սպառ-
նար բոլորովին գայթակղական նկա-
րադիր մը տալ Կեդրոնին եւ Իզմիրի
Առաջնորդին յարաբերութեանց: Մել-
քիսեղեկ Սրբազան այսու կ'ապացու-
ցանէ, թէ եւ անադան, թէ ծայրայե-
ղութիւնը չափ մը ունի, եւ կանգ-
կառնու զառիվայրի մը վրայ որուն
ստորոտն ո՛վ գիտէ ի՛նչ փուշեր պի-
տի գտնէր: Փափաքելի էր Ն. Գերա-
պատուութեան համար որ այսպիսի
հրաժարական մը աւելի կանուխէն տար
առանց գործերն այս ծայրայեղութեան
հասցնելու, որով թերեւս իւր համա-
կրօններէն մէկ քանինքն պահած լի-
նէր: Սակայն Մելքիսեղեկ Սրբազան
յետ այսորիկ բաւական ժամանակ ունի
իւր առջեւ՝ իւր աղարտեալ համբաւը

չտկելու եւ խոհեմ ու ազգաշէն գոր-
ծերով մոռցնել տալու այն ազգավը-
նաս դէպքերն որոց դիւցազնն եղաւ
վերջին կաթողիկոսական ընտրութենէն
ի վեր:

Ինչպէս ըսինք, այս հրաժարման
գլխաւոր օգուտներէ մին ալ այն եղաւ
որ եկաւ վերջ տալ Կեդրոնական իշ-
խանութեան գլխաւոր մտատանջու-
թիւններէ միոյն: Արդարեւ Կեդրոնա-
կան իշխանութիւնն, իւր արդի ան-
կերպարան կացութեան մէջ, անձկու-
թեամբ կը դիտէր այս միջադէպն որ
կուգար նոր բեռ մը յաւելուի իւր այն-
քան ծանրածանր հոգերուն վրայ, Կեդ-
րոնական վարչութեան գերբը միշտ
նոյն տարտամկացութեան մէջ կը գըտ-
նուի: Պատրիարքական հրաժարման
ինդիքը դեռ լուծում մը չը գտաւ:
Ինդիքն այժմ Նախարարաց Խորհուր-
դէն անցած է Գեղարքայ Խորհրդոյ որ
անշուշտ արագ եւ նպաստաւոր որո-
շում մը տալով, նոր հաւաստիք մը
կուտայ իւր լուսամիտ գործունէու-
թեան: Տարակոյս չ'ունինք նոյնպէս թէ
Բ. Դուռն, իւր հանրածանօթ իմաս-
տութեամբ, կը բարեհաճի ժամ առաջ
կարգադրել Պատրիարքական հրաժար-
ման առիթ տուող առկա ինդիքնե-
րը, վերջ տալ կացութեան մը որ ար-
դէն բաւական երկարաձգուեցաւ, եւ
այսպէս լրացնել Հայ ազգին օրինաւոր
բաղձանքներն որ ամեն բան կ'ակըն-
կալէ իւր վեհապանծ հովանին եղող
Օսմանեան դիւանատ եւ կորովաբեր
Տէրութենէն:

Միւս կողմանէ աւելորդ է կարծենք
զեկուցանել ազգային իշխանութեան
թալ պարտաւոր է դիմել առ ում անկ
է, որպէս զի այս առկա կացութիւն
շուտով վերջ գտնէ:

Կեդրոնական իշխանութեան այս
փափուկ կացութեան մէջ մեր ամե-
նուս պարտքն է հարկ եղած աջակցու-
թիւնը նուիրել նմա եւ նորանոր կըն-
ճիւղներ չը յարուցանել: Այս մտա-
ծումը կը ներշնչէ մեզ Վանայ Պատրի-
արքական փոխանորդ Գեր. Ալէաթ-
ճեան Սրբազանի գրութիւնն որով կը
հրաժարի իւր պաշտօնէն: Վստահ ենք
թէ Գեր. Ալէաթճեան, ոյր եռանդուն
եւ օգտաշատ գործունէութիւնը գնա-
հատուած է արդէն, Կեդրոնական իշ-
խանութեան ստիպմանց վրայ ետ կ'առ-
նու իւր հրաժարականն եւ Պատրիար-

քարանք կ'աղատէ նոր հոգէ մը: Նմա-
նապէս գաւառական միւս բոլոր իշ-
խանութիւնք ամեն ժամանակէ աւելի
պէտք է աջալըջութեամբ հսկեն իրենց
վիճակաց վրայ, մինչեւ որ անցնի ներ-
կայ տագնապը:

Ա. Ռ. Ա. Կ

ԷՇ ԴԺԳՈՅ

Շատ խորհեցան թռչունք բոլոր,
թէ զո՞վ կարգեն տէր թագաւոր,
Ոյր ձայն լինի շատ խոշորեկ,
Բարձրէն ձայն տալ գիշեր ցերեկ:

Վերջապէս ընտրեցին
Ագաւաւն սեւածին:
Իսկ աղբարն այս որ լըսեց,
Ջարմանքն առաւ, « օհօ » ձայնեց:
« Աստուած վրկայ կ'երգնում կրկին,
Եթէ թռչունք ըզեղ ունին:
Ձի թագաւոր լինելու համար
Եթէ խոշոր ձայնի պէտք կար,
Քան զիս հզօր ձայնեղ ո՞վ կար:
Յիւմար թռչունք, թէ շինէիք
Ի բարձր տեղ ինձ վրանիկ,
Պիտի տեսնէիք թէ ի՞նչպէս ես
Որոտ կը ձգեմ ահեղապէս »:

Խեղճ իշուկ, խելք չէր ըներ,
— Խելք ունէ՞ր —
Թէ ճանչկաց իշխելու համար
Թեւերու էլ անհրաժեշտ պէտք կար:
ՎԱՀԱՆ ՎՐԻ. ՊԱՐՏԻՉԱԿՅԻ

Օր մը պիտի գրենք ընդարձակօրէն Հայ-
կական առականերու վրայ ընդհանուր տե-
սութիւն մը: այլ սակայն այժմ հարկ հա-
մարեցի Մաթի ընթերցողաց դայս միայն
ծանուցանել թէ մեր հրատարակած վերջին
առականերու հեղինակը մեք չենք, այլ Վար-
դան վարդապետ, որոյ արձակ գրածն ու-
տանաւորի դարձնելով Ազգին ծանօթացը-
նելու ծառայութիւնն ստանձնած ենք:
Վարդան վարդապետ իւր ընդարձակ պատ-
մագրութեամբն արդէն ծանօթ է Հայ գը-
րագիրաց:

Ուրիշ ձեռագիր մ'ալ ունինք, որոյ մէջ
եւս կան հատուկտոր առականեր: Այս ա-
մէնն ի մի հաւաքելով պիտի հրատարակենք
օր մը, եթէ Աստուած կամենայ: (Նոյն)

ՆԱԽԱԿ ԿԱԿԱՍԻԱՅԷ

ԹԻՖԼԻՍ, 18 Նոյեմբեր

Նախորդ նամակովս խոսում էի զինուորադրութեան առիթով երեւան եկած խռովութիւններէ վրայ։ Այժմ նկարագրեմ մի այլ խռովութիւն որ տեղի ունեցաւ Թիֆլիսում՝ Վրացի հանրաժամութեան հայրենասէր սպանեալ Դ. Կիպիանի թաղման հանգէսին առիթով։

Առանց մանրամասն տեղեկութիւններ տալու այդ Կիպիանիի մասին, պէտք է ասել թէ նա լինելով Վրաց ազգային կուսակցութեան հոգին, « Երիտասարդ Մինգրէլիս » ի կենդանացողիչ ոգին՝ միշտ ախոյեան է եղել իւր հայրենիքի եւ ազգի ապագայի բարեկեցութեան թշնամիներին, որոնցից ամենագլխաւորը նա տեսել է Ռուսիայի մէջ։ Ի հարկէ, որքան այդ իրաւացի է, դրա մասին չէ մեր խօսքը, մենք արձանագրում ենք միայն փաստը։ Անշուշտ Ռուսիայի համար ամենեւին դժուար չէր մի անձի հետ գործ ունենալ։ Բայց Կիպիանին մի անձն չէր, այլ մարմնացած անձն էր ներկայանում այն կուսակցութեան, որ ահա շուրջ 30 տարի է՝ գործում է գաղտնապէս իւր հայրենիքի անկախութեան համար, որ իւր ազգի բազմաւորութիւնն ու երջանկութիւնը տեսնում է իւր հարեւան ազգերի, գլխաւորապէս հայերի հետ եղբայրական, բարի դրացիական յարաբերութիւններ հիմնելու վերայ, որ համոզուած է, թէ այդ ազգերի ապագան անխզելի կապերով կապուած են իրար հետ։ Վերջապէս Կիպիանին ունէր խիստ մեծ ժողովրդականութիւն։

Կարծեմ 1830 թուականներին էր, որ Դ. Կիպիանին արտորեցին Վոլոգդա (Ռուսիայում), բայց շուտով էլ վերադարձին՝ տեսնելով, որ նրա արտորը կարող է վտանգաւոր հետեւանք ունենալ։ Եւ ահա Կիպիանիին վերադարձնելով հայրենիք, աշխատեցին նրան գրաւել պարզեւեցեցնելով, պաշտօններով, շքանշաններով, աստիճաններով... Եւ ահա Կիպիանիին մենք պատահում ենք ամեն աստիճանների վերայ՝ աստիճանաշրջան, գրադրի աստիճանից սկսած մինչեւ ամենամեծին, Փոխարքայի կանցլիարիայի անդամութեան աստիճանը։ Նա եղել է ուսուցիչ, տեսուչ, խմբագիր, Թիֆլիսի քաղաքագլուխ, Փոխարքայի նահանգի աղնուականների առաջնորդ, զինդատնտեսական ընկերութեան անդամ, փոխ-նախագահ եւ նախագահի պաշտօնավար, նա պաշտօններ է վարել եւ պետական գաղտնի յանձնարարութիւններով եւ միշտ աջող... սակայն այդ ամենը չատ քիչ ազդեցին Դ. Կիպիանիի վերայ եւ նա մնաց նոյն հոգով, նոյն ձգտումներով, նոյն գաղափարներով ինչպէս եւ երիտասարդ միջոցին։ Վերջին ժամանակներս նա ապրում էր Ստաւրոպոլում՝ որպէս արտոր, ուր ստանում էր ամսական հարկեր բուրլի չնչին գումարն ապրուստի համար։ Եւ ահա այդ տեղ, « Կոյս » չարագործներ մտնելով նրա բնակարանը՝ որ շատ դժուարին մուտք ունի օտարների համար, բռնութեամբ մի հարուստ ու ջախջախում են նրա ձախտի եւ բռնքի ձախ կողմը, որով ծերունին նոյն վայրկեան, ինչպէս բժիշկները վկայեցին, աւանդել է հոգին։ Բայց չը նայելով դրան, գտել են նրա ձեռներն ու ոտները կապած եւ մարմնի կամ շարկի վերայ էլ՝ եւ ոչ մի հետք կուզի կամ ընդդիմութեան։

Այդ սպանութիւնը ծածկուած է մութ եւ թանձր քողով՝ որը գուցէ ամենեւին չը բարձուի...։ Ձանազան կերպով են բացատրում այդ սպանութիւնը, որոնցից ամենատարածուածն այն է, որ կառավարութիւնը — թէ՛ մարմնաւոր (Իշ. Դոնդուկով-Արսակով) եւ թէ՛ հոգեւոր (Վրաստանի Եկզարբոս Պաշտոն) նրան դէմ լինելով, միշտ թշնամի ճանաչելով, ուղեցին մի կերպով ազատուիլ նրանից։ Բայց որովհետեւ քաղաքական արտորը կամ մահը կարող էր իրենց գործին խիստ վնասել, նորանից ազատուելու հնար գտան մասնաւոր սպանութիւնը։ Թէ՛ որքան ճշմարիտ է այս լուրը՝ մենք չենք ուզում քննել, բայց այդ բանը շատ զայրացրեց Վրացիներին, որոնք առիթ էին փնտռում իրենց դառնութեան թոյնը թափելու։ Հանդուցեալի որդին եւ ազգականները կառավարութիւնից թոյլտուութիւն խնդրեցին, որ նորա դիակը փոխադրեն Թիֆլիս։ Կառավարութիւնը թոյլ տուաւ եւ նշանակեց այն ճանապարհը, որով հանգուցեալին պէտք է անցկացնէին քաղաքի մէջ մտցնելուն յետոյ, իսկ ճանապարհը այնպէս էր նշանակած, որ ընկնում էր քաղաքի ծայրում, այնպէս որ, հանդէսի ընթացքը պէտք է քաղաքի անմարդաբնակ կողմերով անցնէր։ Հասկանալի է, որ կառավարութիւնը ցանկանում էր, որ ընդհանուր ուղադրութիւնից վրիպէր այդ հանգէսը եւ մեծ շուք չ'ստանար...

Նոյեմբերի 9ին, կիրակի օրն էր, որ ամբողջ քաղաքը ահագին բազմութեամբ խռնուած էր քաղաքի հիւսիսային կողմում։ Արդէն մի շարաթից աւելի էր, որ քաղաքի մէջ անդադար, միմեանց յաջորդող հոգեհանգիստներն, որոնց յայտարարութիւնները հրատարակելիս էին բոլոր տեղական հայ, ռուս, եւ վրացի թերթերն, ժողովրդեան պատրաստել էին այդ օրուայ համար...։ Ահա հանդէսը սկսուեց. 12 երգեցիկներ՝ ազգային, յատկապէս կարած շորեր հագած, Կօրիի եպիսկոպոսը, բազմաթիւ քահանայներ, տխուր եղանակերով, հանգիստով մտան քաղաք...։ Բազմութիւնը ահագին քանակութեամբ հետեւում էր նրանց չորս կողմից։ Կիպիանին դրած է պսակազարդ դիակաւորի վերայ։ Նորա ետեւից գալիս է մի ուրիշ դիակաւոր՝ լիքը պսակներով։ Քաղաքի հիւսիսային կողմից հազիւ էին քաղաք մտել, երբ ոստիկանապետը կանգնեցրեց հանդէսը յիշեցնելով որ պատուիրած է մեծ փողոցով չանցնիլ, այլ ուղղել ընթացքն այդ տեղից՝ դէպի արեւմուտք՝ Մամա-Դաւիթ, սուրբ Դաւիթ վանքը՝ ուր պիտի թաղուէր հանգուցեալը...։ Բայց ո՞վ որ նրանց լսողը, հանդէսը խաղաղ բայց շարունակուեց առաջ մինչեւ մի օրոշեալ տեղ, ուր նրանց կրկին կանգնեցին օրէնքի ներկայացուցիչները՝ բռնի ստիպելով բայց ինչ ուղղել դէպի արեւմուտք։ Բայց անհնար եղաւ. բնոր Վրացիներն էլ զինուած են, բոլոր իշխաններն էլ գրգռուած են, յուզումն ընդհանրանում է, մի քանի խիստ խօսքեր ուղղվում են կառավարութեան, Իշ. Դոնդուկովի եւ Պաշտոն Եկզարբոսի հաշտին, մի քանի խռով ակնարկութիւններ լինում են Կիպիանիի սպանման մասին եւ վերջապէս շատերն արդէն ձեռները զրել են խէնջարի կոթին՝ պատրաստ են պատեաններից մերկացնելու։ Այդ միջոցին, հանդուցեալի որդին բարձր ձայնով գոռում է ոստիկանապետին. « Ասացէ՛ք իշխանին, որ հանգուցեալին կը վերադարձնենք զիւլ, իսկ եթէ կ'արգիլէ՛ կը

թողնենք այս տեղ, փողոցի մէջ »։ Հանդէսը կրկին շարունակուեց նոյն ճանապարհով՝ Փոլովինսկի Պրոսպեկտի վերայով առաջ ընթանալ. ամբողջ փողոցը ծածկուած է ժողովրդով, անթիւ կառքերով եւ ձիաւորներով։ Հանդէսը վերջապէս հասնում է երկրին կառավարչապետի պալատի մօտ՝ ուր կանգնելով, կարգ են կատարում։ Այստեղ արդէն ոստիկանապետը խնդրում է, համոզում է, սպառնում է փոխել ուղղութիւնը, չ'անցնել պալատի առաջից՝ որովհետեւ իշխանի խտրեւ հրամանն է այդ չանել։ Կրքերը յուզվում են, դէմքերը խռովում, բարկութեան բոցը փայլում յուզարկաւորների աչքերում։ Հանդէսը յամրաբայլ անցնում է իշխանի պալատի առաջից դէպի հարաւ եւ այնուհետեւ դառնում է դէպի հարաւ-արեւմուտ եւ ուղղվում է Ս. Դաւիթ վանքը՝ ուր եւ ամփոփում են մօտ ութսունամեայ ծերունու դիակը՝ վանքի արեւմտեան կողմում։

ՄԱՍԶԵԱՅ

ՄԱՐԴԱՅԻՆ ԲԱՐԲԱՌ ԵՒ ԼԵՋՈՒՔ

(Շար. Նախորդ Թուէն եւ վերջ)

Ի սկզբան ժժ դարու, առ վերահաստատեալ Պուրպուրեանք, Պոնալ կաթոլիկ իմաստասէրն եւս՝ ճառելով զայսմ խնդրոյ՝ Քոնտլյեաքի պէս բարբառն անհրաժեշտ կարեւոր կը ճանաչէ առ ի խորհիւ։ Այլ զի առանց խորհից բարբառն ինքնին սին աղաղակ է, զայն ոչ համարի մարդկային գիւտ, որովհետեւ առ ի գտանել իմ ճանապարհէ խորհիւ։ Վասն որոյ զերկուսին միահաղոյն յԱստուծոյ տուեալ կը համարի։ Այսպէս Պոնալ Քոնտլյեաքի բոլորովին հակառակ հետեւութիւն կը հանէ։ Եթէ Պոնալ իւր այս տեսութեամբ յայտնել ուղէր միայն թէ մարդս իւր Արարչէն կախումն ունի, յորմէ ստացած է իւր ամենայն արարողականութիւնը, ընդունելի պիտի լինէր նորա վարդապետութիւնն այդ սահմանի մէջ։ Պարթէլըմի Սէնթ-Իլէն համարձակ կը հոչակէր թէ բարբառոյ ծագման խնդրոյն լուծումն, այն կերպիւ որով տուեալ է ի կրօնական աւանդութենէ, իմաստաւորաբար եւս ամենէն աւելի բարձր եւ հաւանելին է. բայց Պոնալ զայդ բարբառ գերաբուն իմն օրինակաւ յԱրարչէն առաջին մարդոյն ուսուցեալ կը համարէր։

Առ՝ այնու ժամանակաւ ներհուն իմաստասէր ոմն՝ Մէն տը Պիւան՝ կը փորձէր զգայականութեան աւերածոց վրայ հիմնել մտապաշտ հոգեբանութիւն մի եւ նոր իմն բնագիտութիւն։ Մէն տը Պիւան ո՛չ Պոնալի եւ ոչ Քոնտլյեաքի գաղափարները կ'ընդունէր զծագմանէ բարբառոյ։ Ոչ գերաբնապէս յայտնեալ լեզուի կը հաւատայր՝ նա եւ ոչ արտաքին զգայութեան միջոցաւ խորհեցման հետ յառաջադայեալ խօսից։ Լայպնիցի կարծեաց մօտ են նորա տեսութիւնը։ Մարդկային հոգւոյ արարողականութեանց ազատութիւն եւ մտածօրէն ի կիրառման մէջ կը խնդրէ նա զմտեղ բարբառոյ, եւ կը համարի զայն արդիւնք ինքնատես բանականութեան, որ հուզ ընդհուպ հետաւոր գործողութեամբ կը ստեղծանէ իւր խորհից արտաքին նշաններ եւ նոքօք զիւր գաղափարս թէ՛ յինքեան կը նկարէ եւ թէ՛ այլոց կը ծանուցանէ։

Սակայն յետ սակաւ ինչ ժամանակի ի վեր կ'երեւէր իրախոյզ գիտութեանց նոր յիշմիւրէնք, լեզուաբանութիւնն, որ հանդերձեալ էր առնել մեծամեծ և հոյակապ գիւտեր: Այս գիտութեան աշխատանքաց մէջ Ռ. Ռոքան առաջին եղաւ որ լեզուներն իսկ ինքեւրով՝ նոցա ծնունդ ու կազմութիւնն տուող մտաւոր գործողութեանց հետքն որոնելու նկրտեցաւ, եւ իւր հետազոտութեանց արդիւնքն հրատարակեց Մաքսաքս Բաքսթայ մականգրեալ երկասիրութեամբ, յամին 1848: Ապա նոյն խնդրոյ վրայ գըրեցին վարդապետօրէն հեղինակութեամբ Յակոբ Արիմ, Փոթ, Շլայխէր, Շլայխթալ, Մաքս Միլլէր, Հուլիթէյ, որք թէեւ միշտ միմեանց հետ համաձայն չեն իւրեանց տեսութեանց մէջ՝ բայց գիտական եւ դրական հանգամանք տուած են խնդրոյն, որ վերացեալ հայեցողութեանց անորոշութենէն այլ եւս զերծ՝ բազմօր յառաջացաւ: Դատ հիմնական կէտեր հաստատապէս եղեալ են, և մօտ կը համարի ժամանակն յորում բարբառոյ սկսման և կազմութեան հարցն պատմական ոճով և գննութեամբ լուծեալ պիտի կարենայ նկատուիլ:

Ըստ հասարակաց հաւանութեան՝ յօդաւոր բարբառն ո՛չ միայն մարդոյ բարձրագոյն եւ գեղեցկագոյն ստորագրեաց մին է, այլ եւ նորա էական հանգամանաց մին, որպէս է եւ խորհեցողութիւնն: Միայն թէ գիտակցութեան եւ խորհեցման վարժումը կանխագոյն պատահած է ի հարկէ քան զխօսքն որ ձեւ եւ սահման տրուած է խորհրդոյ: Մարդս՝ վարեւով իւր բնատուր եւ ընդակից արարողականութեամբ ինքնին ազատօրէն յօրինած է զիւր բարբառն: Այլ թէ զիւրոք, զայսմանէ ահա երկու տարբեր վարդապետութիւնք յեւեան եկած են, յորոց առաջինն է Ռոքանին, եւ երկրորդն՝ Յակոբ Արիմի:

Ըստ առաջնոյն մարդս անկարող է բարբառ ստեղծանել իւր բանականութեան մը տածօրէն արկմամբն ի կիր, սակայն եւ խօսքն արտաբերուտ տուեալ չէ ինքեան: Կը մնայ միայն բարբառոյ ստեղծումն վերագրիլ ինքնաբերաբեր եւ պարստաբար գործող մարդկային արարողականութեանց: Մարդ ըստ կամի առած չէ ի կիր, ասէ Ռոքան, յօդաւոր ձայներն իրեւ նշան գաղափարաց, այլ խօսքն բնական է ի նրմա թէ՛ ըստ գործարանական յառաջածութեան եւ թէ ըստ նշանական զրուութեան: Արպէս անտեղի է իբր գիւտ ինչ համարիլ աչաց պիտառութիւնն ի տեսանել եւ ախանջացն՝ ի լսել, այնպէս անտեղի կը համարի նա գիւտ կոչել խօսքի ի կիր առումն իրեւ յայտական նշան խորհրդոց, վաւրն որոյ յօդաւոր ձայնից ի գործ ածումն մտածութեան արդիւնք չէ ըստ Ռոքանի, եւ բարբառն ոչ այլ ինչ է բայց եթէ նիւթական իմն գործ նման տեսաւորութեան աչաց, գործ որ արտաբերն տպաւորութեանց արդիւնք միայն կարէ լինել:

Ռոքան իւր այս տեսութեան արամաբանական հետեւութեանց շաւղին մէջ ըստ յառաջ չ'երթար, եւ կը կանխէ այդ ընծայութեանց մի մասն իսկ բախտել խոհեմ գգուչութեամբ: Բայց այլք առաւել խիզախելով հասած են յանուանեալն վարդապետութիւն Գրեթեֆանեան, այն է անհրաժեշտ եւ նիւթական յառաջածութեան մարդկային բարբառոյ: Գրեթեֆանցի իմաստասէր լեզուաբանին մի, չէյգէ, բոլորովին հերքած է զայդ խորթատեսակ վարդապետութիւն, ցուցանելով թէ մար-

դըս ազատօրէն յօրինած է զիւր բարբառն: Գիւտ ոչ մի հարկեցողիչ պատճառի հաւատակած է ի ստեղծանելն զայն, այլ գործած է իւրով անհատական ինքնութեամբ, ինքընյառաջածութեամբ, որ սոսկ գործարանական պաշտամանց մէջ տեղի չ'ունի:

Բոլոր հնագոյն լեզուաց զարգացումն իսկ, որոյ պէսպէս հանգամանք ծանուցեալ են այսօր շնորհիւ լեզուաբանական գիտութեան, ակնյայտիման կը ցուցանէ արդէն թէ գիտակից բանականութիւնն, մականութեամբութիւնն եւ կամքն որպիսի՝ մասն ունեցած են ի կազմութեան բարբառոյ եւ որպիսի՝ յառաջագիմական մոտիվութիւն յառաջ բերած են հետզհետէ:

Ռոքան ի մատենի անդ Մաքսաքս Բաքսթայ երկու վիճակ եւեթ կը գնէ լեզուաց բարեշրջութեան մէջ: Մինն է համագրականն, նախնական ճիւղ եւ յորդաւոր վիճակ, յորում գաղափարաց առնչութիւնք յայտնեալ են բառից կցեալ վերջիւք կամ հոլովիւք, որք այնքան աւելի բազմաթիւ են որքան հին է լեզուն: Միւսն է վերլուծական վիճակն որ յետոյ կուգայ, յորում ժողովուրդն կը խզէ հոլովեալ բառին միութիւնն, և գաղափարաց առնչութիւնքն մասնկտրեալ կամ օժանդակ բառիւք յայտնելով՝ լուսագոյն կը համարի առնթներ միմեանց շարակարգել խօսքից այլ եւ այլ մասունքն: Զարգացման այս կերպումը ըստ Ռոքանի կը համեմատին ընդ մոտիվութեան բարբառոյ մանկանց որք զառաջինն կ'սկզբն աւանային ինչ միահալոյն բացատրել եւ ի վերջոյ միայն կը կարողանան յստակագոյն մտածել: Այս կերպիւ կը բարձուի բարբառոյն նախկին միավանկ գաղափար վիճակն, եւ կը նորոգուի գրութիւն մի գոր Ապէլ Ռէմիզա վաղ իսկ ի վեր երեւցողացած էր պայծառաբան ոճով:

Բայց այսօր, որպէս համայն լեզուաբանինց հաւանեալ են եւ որպէս առաւելովքն է ապացուցեալ գիտնական եղանակաւ, բարբառոյ նախնական պատմութիւնն երեք որոշ շրջաններու կը բաժանի որք միմեանց կը յաջորդեն եւ են գաղափար միավանկութեան, շարակցութեան եւ հոլովման շրջանք:

Ամենայն լեզուք չեն անցած ընդ այս երիւ կերպումնս: Բայց վերջին շրջանի կամ հոլովական լեզուք ունին առաւել զարգացումն կազմաւորութիւն քան միջին շրջանի շարակցող կամ բարդող լեզուներն, եւ սուքա՝ քան զմիավանկ լեզուս: Հին եւ նոր լեզուաց մէջ են ոմանք որ անցած են ընդ այս երիւ մոտիվաւորն, եւ են որ գաղափարեալք են յիւրեանց զարգացմանէն: Այսպէս ուրեմն բարդող լեզուք ունին ընդ ինքեամբք եւ զմիավանկութիւն, իսկ հոլովականք թէ՛ զմիավանկութիւն եւ թէ՛ զյարարաբարութիւն:

Զայդ կարեւոր իրողութիւն առաջին անգամ ի վեր հանեց Յակոբ Արիմ՝ բարբառոյ ծագման վրայ գրած քննախօսութեան մէջ եւ լեզուաբանական գննութեամբ եկաւ հասաւ յայն հետեւութիւն իսկ զոր երբեմն գտած էր Մէն տը Պիւան լոկ իմաստասիրական տրամախոհութեամբ: Այդ տեսութեան կը յարի եւ Զրանուա Լընորման յիւրում Հնապարհագրեան Արեւելից:

Ըստ այդմ՝ բարբառն կամ մանուանդայն թանձրացեալ ձեւք զորս կը գգենու ի լեզուս՝ են մարդկային գործք, մարդոյ մի ընդարայն արարողականութեան ազատօրէն եւ մտածօրէն ի կիր առմամբն յառաջ եկած: Բայց ի սկզբան անդ հաստման բար-

բառոյ՝ ինքնաբերական մեծ մասն մի եւս կայ, առանց գիտակցութեան եւ գրեթէ բնական ազդեամբ գոյացեալ: Հանգոյն աւանայն բնածին ազդմանց, որք ըստ աճել բանականութեան կը նուազին, բարբառոյ արարողականութիւնն եւս տակաւ թափեց զիւր ստեղծագործական ոյժ, եւ գիտակից բանականութիւնն հետզհետէ զիւր կանոնքն եւ մտածական գործողութիւնքն յառաջ մատոյց ի տեղի անմիջական արդեանց մարդկային ինքնաբերութեան: Ապա գերիշխանական տիրողութիւն ստացաւ ի բերականական զարգացման լեզուաց:

Ի սկզբան անդ երեւման մարդկութեան, ըստ ցուցիւք հաստատելոյ Շլայխթալի, հոգին եւ մարմինն այնպէս կ'ախտումն ունէին զիրեւոյց, որ հոգւոյ ամենայն շարժումնք արձագանգ կը գտանէին ի մարմնի, զխաւորապէս շնչական եւ ձայնական գործարանաց մէջ: Մարմնոյ եւ հոգւոյ այդ համակրութիւն, որ դեռ կը գիտուի մանկանց եւ վայրենեաց վրայ, սերտ եւ արգասաւոր էր. մէն մի տեսիլ ինքնադիմի, մէն մի գաղափար կը զարթոյցանէր աւաջ ինչ կամ ձայն: Մէն մի յուզումն, ճիգն եւ գործ կամաց կամ զգայականութեան ձայնարկութեամբ իւրի վերադրեցան ի սկզբբանէ անտի: Այդ ձայնարկութիւնք, յովովիկ նմանեալք այն ձայնից զորս գրգռիչ առարկայք կը հանէին, բարանց կ'աճման, ծառոց տատանման, կենդանեաց բնչման (զորս Հ. Սերովբէ Տէրվիլեան բնաձայնք կ'անուանէ), նշաններ՝ եղան հոգւոյ այն շարժմանց յորոց յառաջագայեալ էին և այն գաղափարաց որք են հետք այդոցիկ շարժմանց ի միտս: Աստ ի դէպ է ի մէջ մատուցանել գաղափարաց յարակցութեան օրէնքն, որով այս ինչ ինքնադիմի տեսեան կամ գաղափարի հետ յառաջ եկած ձայնք կը յարակցէր ի հոգւոյ ընդ նոյն տեսեան կամ գաղափարի, այնպէս որ երկօրին իբրեւ անբաժան կ'երեւէին գիտակցութեան, և անբաժան մնացին յիշատակութեան մէջ: Այսպէս ուրեմն ձայնն յօդակապ ինչ եղաւ ընդ պատկերն ստացեալ տեսութեամբ աչաց եւ ընդ պատկերն պահեալ ի յիշողութեան: Կամ այլապէս ասելով՝ նշանականութիւն ստացաւ եւ եզու տարր բարբառոյ: Յիշատակութեան պատկերն եւ տեսաւորութեան պատկերն նոյն չեն արդարեւ: Կը նշմարեմ երիվար մի. ոչ մին այն երկվարաց զորս տեսած եմ երբեմն՝ յար եւ նման է սմին գունով՝ մեծութեամբ եւ այլովք իրօք: Երբեք բառիւ յայտնուած ընդհանուր գաղափարն համատեսակ կենդանեաց հասարակ հանգամանքն եւեթ կը բնականեալէ յինքեան: Եւ որ հասարակաց ինչ է՝ այն կը կացուցանէ՝ բառին նշանականութիւնն:

Նախկին բարբառոյն գրեթէ ամենեւին օտար էին բնազանցական վերացեալ գաղափարք, եւ ամենայն ինչ թանձրացեալ եւ զգալի կերպաւորութիւն կ'աւանդուի: Կը թուի թէ բնական իրաց բացատրութեան համար նմանաձայնութիւնն կամ բնաձայնք սովորական միջոց էին յորջորջմանց: Եւ որովհետեւ մարդկային հոգնք միանգամայն նշան եւ ձայն էին, բնական էր որ հնչից ձայնն առնուէր իրեւ նշան ձայնից բնութեան: Եւ ըստ որում յորջորջմանց ընտրութիւնք կամայական չէ եւ մարդ երբեք յախտուտ ըստ պատահման ձայներ ի մի բերելու չ'ենէր իւր խորհրդոց նշաններ կազմելու համար, կարելի է հաստատուիլ թէ՛ զարդիս ի կիր առեալ բառերէն չիք եւ ոչ

մի որոյ չիցէ ըստ բաւականի պատճառ, թէ իրեն նախնական իրողութիւն եւ թէ իրեն մնացորդ հնազոյն լեզուի։ Արդ՝ նախնական իրողութիւնն՝ որ բառից ընտրութիւնն ի հարկէ սահմանեց, նշանակելի առարկային նմանութիւնն իսկ տալու ճիգն է անշուշտ։ Մարդս ուրեմն նախ միավանկ ձայներ արձակեց, զորս կապեց ինչ ինչ որոշ առարկայից գաղափարին։ Այդ ձայնը կազմեցին լեզուի նախնական արմատները, միավանկ բառեր, որք ի սկզբան թանձրացեալ գաղափարներ միայն կ'արտայայտէին։ Բայց մարդկային միտքն իւր ընդհանրացուցիչ արարողականութեամբ վաղ իսկ յատկացոյց զայն ինչ ինչ պարտաւթեանց առարկայից։ Արդարեւ կը զիտուէր որ հընդերսուական լեզուաց բոլոր հնազոյն արմատը ընդհանրական կամ սեռական նշանակութիւնն ինչ կուտան։ Բայց այդ ընդհանրական գաղափար բնական իրի իմիջ եւս կը վերաբերի, և զայն ցուցանող բառն անանցութեամբ՝ փոխաբերութեամբ կամ նախնական իմաստին այլով փոփոխութեամբ կ'առնու. վերացեալ իմաստ։ Բառերն հաստատ եւ որոշ նշանակութիւնն չ'ունէին. եւ ահա այս պատճառաւ նախաւոր լեզուի գոյութիւնն եւ ոչ մի յիշատակարան թողած է այսօր։

Առաստական արմատներէ՝ որիչ դերանունական արմատնոց ստեղծումն եղաւ առջին յառաջագիտութիւն մի, յորմէ ծագումն պիտի առնուին այլ ամենայն գարգացմունք։ Զննութիւնն հնազոյն վիճակի մինչեւ իսկ միամասնեայ գաղափար լեզուաց ցոյց կուտայ այդ երկու կարգ արմատնոց որոշութիւնն որք յաւէտ կամ նուազ ներմիութեամբ կը շարակային, եւ այդու այլալութիւններ եւս կը կրեն։ Դերանունական կամ ցուցական արմատնոց ի կիր առնումն եղաւ նախաշաղկիւ երեւման քերականական ստորոգութեանց։ Ներկորդական արմատը շարակցեցան նախաւոր արմատնոց հետ։ Ընդ նմին յերեւան եկաւ եւ ձայնից աղաւաղութիւնն։ Գլխաւոր արմատն առնոց այլալութեան կը պահէ զիւր գոյութիւնն. բայց բառին բազմապատիկ տարերաց միութիւնն տուող չեղտին ազդեցութեամբ երկորդական կամ յարաբերեալ արմատնոց հնչումը կը կորուսանէ զիւր յատկութիւն, կը սղի եւ կ'այլալի, մինչ դոցա անկախ նշանակութիւնն եւս կը խափանուէր։ Յայնժամ կազմութիւնն առին բաղմավանկ լեզուք, եւ սկսաւ բարբառոյ համադրական շրջանն, յորում բազում աստիճանք են։ Ի սկզբան երկորդական արմատը միայն այլալեալ էին եւ գլխաւոր արմատը կը պահէր զիւր ամբողջութիւնն։ Այս է որ կը կոչուի շարակցական վիճակ, յորում բառից կցման տեղիքն յայտնի կ'երեւին։ Ի վերջոյ երկորդականաց հետ գլխաւոր արմատն եւս հաւասար այլալութեամբ միաւորեցաւ, և այս է որ կը կոչուի հոլովման կամ յարախառնութեան վիճակ, յորում բարդ բառերն իրենք միապաղաղ կ'երեւին։ Այս երկու բաժանմունք շատ որոշ չեն, և կան բազում միջինք ընդ մին և ընդ միւսն։ Նոր բարեշրջութիւն մի բերաւ համադրական լեզուներն ի ձեւ վերլուծական, յորում բաղադրուցից տարերք անջատուելով կը շարադասին նոր արամարանական կարգաւ, որպէս զի ասացուածն առաւել զիւրիմանալի եւ մեկին լինի։ Յայնժամ նախադրութիւնք կը պիտարկին. առ ի ցուցանել բառից աղերսքն առաւել եւս ճշդութեամբ. հոլովք կը լինին անողուտ եւ

խառնավար եւ տակաւ կը խափանին խառն. խառնահման մէջ օժանդակ բայք ծանակ եւ դէմք ցուցանող վերջից եւ նախադաս մասնական տեղ կ'անցնին։ Վերլուծական լեզուք չ'ունին նաեւ պարզ կամ դրական անակախաց վրայ յաւելեալ վերջիք բաղդատականներ եւ վերադրականներ, որպէս եւ ոչ մասնաւոր յանդուածովք կազմեալ անդրադարձ եւ կրաւորական բայեր։ Իրենք օրինակ վերլուծական լեզուի կը յիշենք աստ գաղղիերէնն, իսկ մայր նորին՝ լատիներէնն՝ է համադրական, որպէս եւ սանսկրիտն։ Լատիներէնի եւ յունարենի նման միջին իմն ընդ համադրականն եւ ընդ վերլուծականն է եւ մեր հայերէն լեզուն, որ առանց նախնութեան փառաց իսկ՝ ոչինչ նուազ պոսեծալի կը հանդիսանայ առ այլովք լեզուք, զի իւրով ճոթութեամբ եւ այլ յատկութեամբ չէ ընդհանա ի կատարելագունից եթէ համադրական եւ եթէ վերլուծական լեզուաց։

Խ. ՈՒՂՈՒԻՆԿԱՆ

Իւսկիւտար, 22 ՆՍ. 87

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Պատերազմական պէտք. — Հայրենեաց պարտք. — Փոխադրութեան անհրաժեշտութիւն. — Առողջական կառաւարդութիւն. — Յրաքոյն գերմանական պատերազմը. — Զինական դեղագործ. — Անթի-մալարիա հնարաւորութիւնք. — Միջնաւերին Ձի-նաստան. — Երկաթուղեաց պաշտօնեայք. — Շրջ-րէջլ եւ դատի վախճանն. — Ախտաբանական վիճակագրութիւն։

Պատերազմն կ'առթէ տէրութեանց մեծ վնասներ, կը սփռէ նաեւ ամենուրեք բազմաթիւ դիակներ, որոց մէջ կը գտնուին վիրաւորներ եւ հիւանդներ։ Մեռելները կեանքէ զուրկ են, մինչ վիրաւորներն ու հիւանդներն յոյս ունին կենաց վրայ։ Հայրենեաց պարտաւորութիւնն է ապահովել անոնց կեանքը, դարմանել զայնս։ Նախ վիրաւորները փոխադրելու է հիւանդանոցի մէջ, որպէս զի պատերազմի դաշտին վրայ չը մատնուին թշուառոյն անզուրկ ձեռաց մէջ։ Փոխադրութիւնը խիստ դժուարին է. վասն զի մեծ զգուշութիւններ հարկաւոր են։ Պէտք է արգելուլ փոխանցական հիւանդութեանց վարակումը։ Տակաւին շատ դժուարութիւններ միանալով պատերազմի տաղանալին հետ գրեթէ անկարելի կ'ընեն թշուառ հիւանդաց կամ վիրաւորներուն ազատումն։ Երբ յաղթական թշնամին կը քայլէ արագաբար, իւր ոտից ներքեւ կը մեռնին վիրաւորներ եւ իւր բանտերը կը լեցունին չլիցայտապ գերիներով։

Հայրենիքն ահա այս պատճառաւ կը պարտաւորի իւր որդեց կեանքն ազատել ամեն կարելի միջոցներով։ Քանի որ պատերազմն արդելու անկարելի է, գէթ իւր զոհերը պէտք է նուազցնել։

Առողջական կառաւարդութիւնն մը կարող է մեծ ծառայութիւն մատուցանել հայրենեաց։ Առողջական կառաւարդութեան կազմում է կառքերէ, որոց մէջ գետեղեալ են անկողիներ. այս կառքերուն մէջ հիւանդաց համար ամեն տեսակ նիւթեր կը գտնուին. մասնաւոր կառքեր կան խոհարանի, դեղարանի և լուացարանի համար։ Վերջապէս, այս առողջական կառաւարդութեան շարժուն հաւանդանոց մ'է։ Ի Ֆրանսա վերջերս Սեն-Լա-

զարի կայարանէն մեկնեցաւ առողջական կառաւարդ մը որ կը բաղկանար 25 կառքերէ, պարունակելով վաճառք, խրաբանչիւրն 8 անկողիներ, զոյգ առ զոյգ զըրուած եւ նրբանցէ մը զատուած։ 45 վայրկեանի մէջ 104 պիւնտրներ գետեղուած են։ Ամեն կառաւարդ կրնայ ունենալ մի քանի բժիշկներ, հիւանդապահներ եւ վարչական սպայներ որք պիտի հսկեն հիւանդաց դարմանին ու կառաւարդին կարգապահութեան։ Այն կառքերն որոց մէջ հիւանդներ պառկած են, միշտ միւս կառքերուն միջեւ զըրուած են, որպէս զի կարելի եղածին չափ ցնցումը թեթեւ լինի։

Արմաններն 1870-71 թ. պատերազմին կազմաւորած էին այս կառաւարդներն, որպէս զի փոխադրեն հիւանդներն ու վիրաւորներն, եւ ամենուն ծանօթ է անոնց մատուցած մեծ ծառայութիւնները։ Մարիկէ վարակեալ հիւանդները պէտք է փոխադրել մասնաւոր կառքի մէջ դնելով։ Նոյնպէս հիւանդներու համար զատ տեղեր որոշելու է եւ վիրաւորելոց զատ։ Վերահասու լինելու համար առողջական կառաւարդ կարեւորութեան, քննեցէք Փրանքո-գերմանական պատերազմին վիճակագրութիւններն։ 1870 օգոստոս 25է մինչեւ 3 մայիս 1880, 600 հիւանդներ եւ վիրաւորներ փոխադրուած են Նանսիի կայարանէն, մինչ Փրանսուցի խեղճ վիրաւորներն ու հիւանդները գրեթէ միշտ գերի վարեալ էին Ալմաններէն։ Իւ այս առթիւ հաշիւաւոր բժիշկ մը կը պահանջէ Փրանսական կառաւարդութեան «ամեն զոհողութիւն, միայն թէ ներկայ չը գտնուէր, անգամ մ'ալ, այս օրինակ տեսարանաց», անկարելիով 70ի պատերազմին զէտներուն։ Տօթէտու Ռօշաւ (եւ ուրիշ ատեր) առաջարկած է հաստատել նաւային հիւանդանոցներ, ինչպէս որ Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ կը գտնուին։ Պատերազմի ատեն այս հիւանդանոցները շարժուն պիտի լինին, մինչդեռ խաղաղութեան ատեն, հաստատուն։ Իրենց կազմաւորութիւնը խիստ պարզ պիտի լինի եւ առողջարանական տեսակէտով թէեւ օգտակար, այլ երկաթուղիով փոխադրութիւնն աւելի վստահելի է պատերազմի ժամանակ։

Միջնաւերնոց Յուցահանգէսին մէջ Զէնք-բի-Թօնի զօրավարն հետաքրքրաշարժ դեղագիր մը ծանուցած է։ Այլ եւս ո'վ որ կամի ծառայութեան մեծ դեր մը խաղալ, պիտի կարենայ դիւրաւ զայն ի գործ դնել։ Այլ կամիք, սիրելի ընթերցող, մի քանի օրեր բան մը չ'ուտել, առանց ո'ւ է անպատեհութիւն կրելու, հետեւեցէք յարգելի Զինացիին սոյն պատուէրին։

«Զուրի մէջ երեցէք վեց ունկի ամենալաւ տեսակէ ալիւր՝ հինգ ունկի լաւ ու թանձր սոսինձի հետ, մինչեւ որ թանձրանայ եւ դանդաղ լինի։ Երբ եփի եւ պաղի, գնտիկներ շինեցէք. այս գնտիկները չորնալէ յետոյ, անմիջապէս նետեցէք զայնս հալած դեղին մեղրամոմի մէջ եւ երբեցուցէք մինչեւ որ բոլորովին ծծեն զայն։ Այնուհետեւ ձգեցէք որ նորէն չորնան։ Այս չոր գնտիկներն հողէ ամանի մը մէջ դնելով՝ պէտք եղած ատեն կրնաք գործածել։ Երբ անօթի եղած ատեն այս գնտիկներէն երեսուն կամ յիսուն հատ ճաշակէք, պիտի կարենաք երկու կամ երեք օրեր անցընել առանց անօթեանալու, այլ միմիայն պէտք է զգոյշ կենալ պաղ բան խմելէ։»

Ուրիշ տեսակ պատրաստութեանց մէջ կը

Ջարանի մուտքի դիմաց կարգաւ կայնած կ'աղօթէին յուզուած . . . Եւ երբ սարկաւազ կ'երգէր « Երկիւղիւ եւ հաւատով » կը սարսփն նոցա ոսկորներն ու կը լծանան անոնց աչքեր հեղութեամբ յառաջ մատչելով : Ա'աւարտի ժամերգութիւնն ու մեր սոխակները կը դառնան իրենց նոյն գիշերուան բոյն , ուր արդէն տանտիկին Յովիկ պատրաստած էր մատղած դառն մսէն նահապետական համեղ խորտիկ : Ամենը միասին սեղան կը նստին կուտեն , կը խմեն եւ անուշ անուշ կը խօսին :

Կը վերջանայ այդ յետին սեղան ու դուրս կ'ենեն փոքր ինչ էլ ման կուգան , վերջին ուխտ մ'ալ կատարելով ի Սուրբ գերեզման ուրախ ու զուարթ՝ նուիրական յիշատակաց այդ Ա . վայրին , սարին ու դաշտին , բարին ու թփին , երկրի ու երկնքին , հողին եւ ջրին հրաժեշտ կուտան , ու միեւնոյն ճամբայով իրենց գիւղը կը դառնան :

ԼԹ .

Ընթերցողք արդէն կը ճանչեն Նարգիզ խաթունը , Սիսակի խորթ մայր , գիտեն թէ նորա նախնանք թոյներով որքան փոխուած էր այդ սիրելի բոյր եւ եղբոր հայրը : Այդ օրերն՝ երբ ինք (Նարգիզ) ասկէ անկէ կը լսէ Սիսակի եւ Սոսունի նըպատակն՝ ատելութեան ցաւէն կը կտրի կրակ , ու կը մտաբերէ փորել այդ անմեղներին մի խոր ծուղակ :

Այն երեկոյ երբ Սիսակ եւ Սոսուն իրենց ընկերներով Նարեկայ վանքէն կը դառնան ու ուղղակի լեռնարօտ գնալով Վարդ խաթունի կը միանան , Նարգիզ խաթուն իր էրիկ Պ . Մկրտն առանձին գտնելով՝ կեղծ ու պատիր գոյների տակ փաղաքական խօսքերով մէջ կը բերէ Սիսակի եւ Սոսունի պատմութիւնը :

« Բա՛ , գիտես խոգիս , մենք քո աղէն ու աղջիկը ջուր (լեռնարօտ) ճամբած ենք որ ոչխարները տիրեն ու իւղ ու պանիր չիւնեն , բալէ (բայց) էնոնք իրենց քէֆի հետըն են ինկած , Սիսակ ջուրմի իրիկուն (մինչեւ երեկոյ) Սիրունի աղջկան ետեւ ջան կը դայ (կը պտտի) սավառլու եղած է ալ բանի գործի չէ , քո սեւ սիրտ աղջիկն էլ (Գեղեցկին ակնարկելով) անոնց կ'օգնէ , Աստուած վկայ է . որ այս տարի մենք պաղտ (պահք) բերան պիտի մնանք :

— Ինչո՞ւ , կ'ըսէ Պ . Մկրտն ,

— Իմա՞ (ինչպէս) ինչո՞ւ , քո ճոճեր (զաւակներ) ինչ որ եղ ու պանիր չիւնեն , չան ու կատուի փոր են լցեր , կ'ըսէ Նարգիզ :

— Ո՞վ կ'ըսէ :

— Բանադարներ (լեռնարօտի եւնոզք) ըմեն (ամեն) էլ գիտեն :

— Քո ըսելն ի՞նչ է , կ'ըսէ Պ . Մկրտն :

— Ես լսած եմ որ դու այն անամօթ աղջիկ քո լաճուն (Սիսակին ըսել կ'ուզէ) տի ուղես , եթէ էնի էս (այս) տուն մոնի , ես քո խացն ու ջուր կը հարմեմ , կ'ըսէ Նարգիզ խաթուն :

— Կնիկ դաւակ էտ ինչ ես խելք է քո խելք , դու չես գիտեր որ Մկրտն քեզմէ անխարցնել (առանց խուհուրդ առնելու) բան մը չ'ըներ . դուն որ չես ուղեր , ես ալ ո՛չ բերան կը բանամ , ոչ Սիրունի մունաթ կը քաշեմ , կը պատասխանէ Մկրտն :

Քիչ մը այս խօսքերի վրայ լուսութեամբ անցունելով կը շարունակէ Մկրտն որպէս թէ Նարգիզ խաթունի կատղած սիրտը

հանդարտեցնելու . Փռճ եղնի (լինի) ըսգընա (այնպէս) տղէն , խողի (երանի) թէ էն էլ իր մօր խեղ (հեղ) սատկէր (չան նման սատակիլ) էնի իր պճոճակ (ծոծրակ) տի տեսնի , Սիրունի աղջիկ չը տեսնիր , դուն գնա՝ Եւհաթ (հանգիստ) մացիր (կաց) ես Մկրտն եմ , Մկրտն . . .

Նարգիզ խաթուն տեսնելով որ իր ցանած որոմը լաւ հողը գտած է , եւ ուրախութիւնն որ կ'զգայ թէ եւ անչափ է , բայց զայն կեղծելով խօսքի նիւթը կը փոխէ :

Այս գէպքերի վրայ կը բոլորին մի քանի եօթնեակներ , կը հասնին այդ լեռնային երկրի հնձոց խիստ օրերն , ուստի եւ գիւղ մընացած տանուաւորներ խորհուրդ ընելով համահաճութեամբ լեռնարօտէն վար կը բերեն իրենց ոչխարներն :

Այն օր երբ Հարբէնց գիւղի քաղխուտաներ (իշխանք) կ'որոշեն իրենց խաչանց լեռնարօտէն վար իջնալն . երեկոյին ամեն մէկ տնէն մարդ մը խլեր կ'երթան ու բանադարներին (լեռնարօտի եւնոզներին) կը հաղորդեն այդ որոշումն : Ու անոնք մէկմէկ բեռ իւղ , պանիր եւն ունեւելով կը դառնան յաջորդ օրը . ցորեկուան բէրէն (ոչխար կ'թելէն) ետք , ամբողջ լեռնարօտականք , կիներ , աղջիկներ ու հարսեր կը հաւաքուին այն աւագ աղբեր զով վտակներէն սնած գեղաթոյր մարգագետնի վրայ , ու այդ անմահական աղբիւրի կենսատու կայլակներով լուացուելէ ետք , դալար խոտերէն գոյացած բնական աննման գորգերի վրայ՝ վազող սիրալարկաչ վտակի շուրջը՝ զուգահեռական հաւասարութեամբ՝ նստած կուտեն այն կաթնեղէն եւ իւղեղէն անխարդախ կերակուրներն զոր պատրաստած են իրենց ձեռքեր , ու կը խմեն այն զով եւ անուշ ջրէն որ կը հոսէ Սինէգըր լեռան սրտէն , ինչպէս սիրանուշ մօր մը յորդ ըստինքներէն , ու ապա իրենց այդ լեռնարօտի մէջ անցուցած անմեղ եւ պարզ կենաց հըրաժեշտ տալու համար՝ վերջին ուղախուրթիւն մ'ալ կ'անեն . ամենք ի միասին իրարու ձեռք բռնած հրեշտակային պար մը կը յօրինեն ու բուրաստանի մը մէջ երգող խումբ մը սոխակաց նման հետեւեալ երգը գիւթական պարզութեամբ մը կ'երգեն , ծուռկերի , մէջքի ու գլխոյ հաւասար ճոճումներով կը խաղան .

Պրծեր կուգայ պաղ ջուր սարէն

Պաղումի հա՛ , պաղումի ,

Կը կաթկթի մարմար քարէն

Պաղումի հա՛ , պաղումի :

Արի՛ երթանք սարն ի սէրան՝

Պաղումի հա՛ , պաղումի ,

Քո տարողի մալը՛ 2 վերան՝

Պաղումի հա՛ , պաղումի :

Տուն մ'եմ չիներ գետի բերան

Պաղումի հա՛ , պաղումի ,

Թալեմ՝ 4 վերեն ճուխտակ՝ 5 գերան

Պաղումի հա՛ , պաղումի :

Մէկն էր խոխի՛ 6 մէկ ծիրանի

Պաղումի հա՛ , պաղումի ,

Կտրաւ խոխին կպաւ ծիրան

Պաղումի հա՛ , պաղումի :

Տնէն ելեր , կայներ ես դուռ

Պաղումի հա՛ , պաղումի ,

Մէջդ ես զարկեր ճուխտակ մը նուռ

Պաղումի հա՛ , պաղումի :

Ամեն խառնի՛ 7 պաղ մը ծի՛ 8 տուր

Պաղումի հա՛ , պաղումի ,

Թէ դու չի տաս Աստուած քի՛ 9 ծուռ՝

Պաղումի հա՛ , պաղումի :

Սչխարհ կ'անեն քո եար ծուռէր՝¹¹

Պաղումի հա՛ , պաղումի ,

Մէջ իմ սրտին լալ ու դուռ՝¹² էր

Պաղումի հա՛ , պաղումի :

Ծովէն ելեր ափ կը դողաս

Պաղումի հա՛ , պաղումի ,

Նուան խառն պէս կը չողաս

Պաղումի հա՛ , պաղումի :

Վերեւ մեր տան ծառ կայ մասուր

Պաղումի հա՛ , պաղումի ,

Ներքեւ մեր տան ծառ կայ մասուր

Պաղումի հա՛ , պաղումի :

Ծի ա՛ն քո ծոց մոնենք մուր

Պաղումի հա՛ , պաղումի ,

Աստուած առնի՛ քո չար կիսուր

Պաղումի հա՛ , պաղումի :

Այսպէս մէկ-երկու ժամ խնդալէն խաղալէն , ուտելէն ու խմելէն ետք , յանկարծ կը լսեն ինչպէս յուրիսի թաշնոյց , Բուր մէկ տեղ , կը մօտենան այն ական , զոր կը յարգէին իրենք որպէս մի իր սրբազան , կը համբուրեն նորա քարերը , կը խմեն անկուշտ անկուշտ այն պաղ պաղ կայլակներն որոց կը խառնուին նաեւ իրենց վերջին « մնա՛ս բարով ակնիկ » սրտառուչ բառերի հետ արատաւաց կաթիլներ՝ իրենց սիրելի բուռնէն հեռացող թռչնիկների նման , ամենք էլ կուլան ու արդէն շինութեան ամայացած խուղեր կը դառնան , միեւնոյն զգածումով եւ զգացումով իրենց պարզ կեանքն երջանկացնող սիրելի բուռնիկներին վերջին հըրաժեշտ տալով , ամեն մէկ իր կռնակ բան մը առած , մըջոց բեռնաւորեալ չլթայի մը պէս՝ իրենց գիւղը կը դառնան ուրկէ բացառիկ մնացին ամառուան կիլիճ տաքութեան :

Ղ . Պ . ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

(Շարունակելի)

¹ Զբօսանք . ² անակ . ³ աւեր . ⁴ ձգեմ . ⁵ զոյգ . ⁶ զեղծի . ⁷ հատին . ⁸ ինձ . ⁹ քեզ . ¹⁰ պատիժ տայ . ¹¹ խենդ էր . ¹² թանկագին ակ :

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

Շ Ա Բ Ո Ռ Ա Կ Ա Ն Լ Բ Ո Յ

Դեկտեմբեր 5-էն 11

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ֆրանսայի նոր Նախարարապետը , Պ . Դիուառ , 1827 ին ծնաւ ի Ճինեվրա : Զերմ Հանրապետական էր Բ . Կայսրութեան օրով , Երեսփոխան ընտրուեցաւ 1871ին , և Ժողովոյն մէջ մնաց մինչեւ որ ցկեանա Մերա-կոյտի անդամ ընտրեցաւ . 1879ին երկրագործական եւ առեւտրական նախարար եղաւ , եւ յետոյ ելմտական նախարար :

Ներքին գործոց նախարար Պ . Սառլէն 1840ին ծնաւ . փաստաբան եղաւ . 1835 ին ստանձնեց թղթատարութեան եւ հեռագրաց նախարարութիւնն , եւ յաջորդ տարին ներքին գործոց նախարար եղաւ : — Պատերազմական նախարար Լօժըրօ զօրավար 62 տարեկան է : Հարկաւարտ էր 1846ին երբ Փրանսական բանակ մը զըրկուեցաւ Հռոմ . գտնուեցաւ Սեփառաւորիկ պատերազմին մէջ յորում՝ ծանրապէս վիրա-

ւորեցաւ. ծառայեց ի ձեռնարկ 1864 էն մինչեւ 1870, եւ վերաւորեցաւ ծռնկէն ի Դանապոս. բայց մասնակցեցաւ Քուլմիէրի ճակատամարտին: Իւր քաջութեան համար գընդապետ եղաւ, եւ Պուրպուրի գործաւորին հրամանաց ներքեւ կիսաբաժնի մը հըրամայեց: Բայց Փրանքո-գերմանական պատերազմի վերջն իջաւ նորէն զնդապետութեան, 1875 ին վերստին կիսաբաժնի գործարար եղաւ: 1881 ին նշանաւոր հանգիստացաւ ի Դուռնուզ, զորապետ եղաւ, եւ Զործաւոր զորապետին տեղ ստանձնեց Դուռնուզի բանակին հրամատարութիւնը: — Կրթական նախարար Պ. Ֆէյ՝ Մերակոյտի տի անդամ է եւ փաստաբան, 59 տարեկան է: — Հանրային շինութեանց նախարար Պ. Լուպէ եւս, ծնեալ 1838 ին փաստաբան մ'է: — Երկրագործական նախարար Պ. Վիէյ, ծնեալ 1843 ին, փառազիր էր երբեմն: 1879 ին Երեսփոխան եղաւ: Տուպի Ս. զատ — Որմնագիրներուն զլխաւորն է: — Մովսիսի եւ գաղթականութեանց նախարար Պ. տը Մահի ծնած է Լա Ռէ-իւնեան կղզւոյն մէջ, 1850 ին, եւ երբեմն բժիշկ էր: Զերմ պաշտպան է զՄատակոս-բար վերջնապէս Ֆրանսայի կցելու գաղափարին, զոր բարոյած է ամենուրեք, թէ եւ Փրանսական կառավարութիւնը, Մատակոսբարի հետ կ'ընթած դաշնակցութեամբ, ճանչած է Մատակոսբարի գէթ ներքին ինքնօրինութիւնը:

— Բեղերսպուրիէ կը գրուի առ Մատակոսբարի թէ Պարսկաստանի նոր դեսպանն ի Ռուսիա՝ կը ջատագովէ Պարսկաստանի հետ Ռուսիոյ վաճառականութեան զարգացումը: զի ռուսական վաճառք աւելի կը յաճախին Պարսկաստանի հրապարակին եւ աւելի աճան են քան անգլիական ապրանքներ: Վեհ. Դանիս Կառավարութիւնը գոհութեամբ պիտի ընդունի եղեր Պարսկաստանի մէջ երկաթուղիներ շինելու համար ռուս զբաղմունքներու առաջարկներն: Այս իրողութիւնը կամ ենթադրութիւնը նշան կը համարուին թէ Ռուսիա տնտեսական տեսութեամբ Պարսկաստանի մէջ ազդու պայքար մը կը մղէ Անգլիոյ դէմ:

— Զորավար Պուլանտէ նամակ մը զրկեց Երեսփոխան Պ. Սուլիսի, որ առաջարկած էր իւր ամբողջ զորավարին տալ, եթէ զորավարն յանձն առնուր երեսփոխանութիւն: Պուլանտէ կը պատասխանէ թէ «հայրենասիրական պարտաւորութիւն կը համարի չառնակել իւր զինուորական պաշտօն, ի նախատեսութիւն մտալու պատերազմի մը, յորում Ֆրանսա աւելի մեծ պէտք պիտի ունենայ զորավարներու քան Երեսփոխաններու»:

— Կ. Պուլէ կը հեռագրուի առ Թայմ. Արիւնիկեան Տրիպոլիտի օսմ. իշխանութիւնը գաւառապէս կը գանդատին առ Բ. Դուռն ընդդէմ Փրանսացի պաշտօնատարաց ընթացքին, որք Թուրքիոյ եւ Տրիպոլիտի միջեւ սահմանները կը գծեն, իւրացընելով հողեր որք Թուրքիոյ չեն վերաբերիր: Բ. Դուռն գիտողութիւն պիտի ուզէ Փրանսական Կառավարութեան եւ պիտի խնդրէ որ քննութիւն կատարուի տեղւոյն վրայ, ապագայ դժուարութեանց տեղի չը թողլու համար:

Ն Ե Ր Ք Ի Ն

Ինչպէս յայտնի է կայս. կառավարութեան եւ Պառնոն տը Հիւլի միջեւ կեցած հաշուական խնդրոյն վրայ ժամանակէ մը

ի վեր բանակցութիւնը կը լինին ընդ մէջ Բարձր. Մեծ-Եպարքոսին եւ Պառնոն տը Հիւլի: Այս բանակցութեանց շնորհիւ, թէ եւ երկու կողման պահանջները բաւական բարեփոխուած են, սակայն ինչ ինչ կէտերու վրայ համաձայնութիւն գոյացնել անկարելի լինելով որոշուեր է այդ կէտերը կարգադրել այնպիսի յանձնաժողով մը ձեռամբ որոյ անդամք բնաւ չ'ունենան խնդրոյն մէջ: Այս յանձնաժողով, որոյ անդամ կարգուած են Օսմ. կայս. Պանքայի տնօրէն Պ. Ֆոսթէր եւ Ղալաթիոյ առաջնակարգ գրամատէրներէն Պ. Դուպլինի, առջի օրը կայս. Պանքային մէջ ի նիստ գումարուելով զբաղեցաւ հաշուական քննութեամբ: Դեռ կայ գտնուեցան կայս. կառավարութեան կողմէ Բ. Դրան իրաւագէտ խորհրդականը Վսեմ. Գարբիէլ եւ Կէշէր էֆէնտիք եւ Պառնոն տը Հիւլի կողմէ Պ. Քիւլման:

— Եւսթորգ Խտիվ Խամայիլ փաշա Եւսթորիէն մեկնած է յատուկ շոգենաւով եւ հաւանաբար երկուշաբթի օրը մայրաքաղաքս կը հասնի: Եւ Բարձրութիւն իւր մեկնումն յետաձգած էր քանի մ'օր, որպէս զի Եմիրկէնի ծովեղերեայ ապարանքին պատրաստութիւնը աւարտին:

Գահիրէէն առնուած լուրեր կը ծանուցանեն թէ Եգիպտոսի մէջ ընդհանուր գոհունակութիւն պատճառներ է այն լուր թէ Խամայիլ փաշա արտօնուեր է իւր բնակութիւնը Կ. Պոլիս հաստատել: Ժողովուրդն յոյժ զգածուեր է Վեհ. Սուլթանին կողմէ նախորդ Խտիվին տրուած սիրալիր թողտուութեան համար:

— Կիմանանք թէ հետզհետէ Վիէնայէն եւ Բեղրսպուրիէն առնուած լրոյց վերայ որք կը յայտնէին թէ Ռուսիա եւ Աւստրիա նոր զարկ մը կուտան իրենց զինուորական պատրաստութեանց, Բ. Դուռն պատշաճ դատեր է ինչ ինչ զգուշական միջոցներ ձեռք առնուլ, եւրոպական պատերազմի մը պատահականութեան համար: Հետեւաբար յետաձգած է 1882 եւ 1885 տարիներու պահեստի գունդերուն, ինչպէս նաեւ թնդանօթածիք եւ հեծեալ զօրաց արձակումն: Միմիայն հետեւակազօրաց փոքր մաս մը արձակուած է: (Սթամբուլ)

— Զորքուր կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Միւրէֆթէ գաւառակի գալմազամ Հաճի Յակոբ էֆէնտիի:

— Սպարապետի Դուռն ծանոյց բոլոր գաւառաց թէ ճանքորդներու տրուելիք զինուց արտօնագրերն յետ այսօրիկ ոստիկանութեանց կողմէ պիտի տրուին, մէկ տարի պայմանաժամ պիտի ունենան եւ միայն հինգ դրուշ տուրք պիտի առնուի աւանդէ: այդ արտօնագիրը պիտի գտնուին գաւառաց ոստիկաններու գնդապետաց ըով որք տեղական պաշտօնէից հետ միանալով պիտի տան զայնս ճանքորդաց եւ օրինաց տրամադրութիւնն ի գործ պիտի զըրուի ամեն անոց նկատմամբ որք առանց արտօնագրի գէնք կը կրեն:

— Մասնաւոր հեռագիրը կը ծանուցանեն թէ, Ֆէրտինան եւ իւր մայրը շաբթուս մէջ Փիլիպպէ երթալով հինգ վեց օր անդ պիտի մնան եւ յետոյ Սօֆիա պիտի վերադառնան:

— Ի նպատակ Տօրքաս ընկերութեան Լէտի Հուայրի նախաձեռնութեամբ անգլ. գետնախառն մէջ կազմաւորեալ վաճառահանգէսի հասոյթն եղած է 800 ոսկի:

— Ի նպատակ Սկիւտարի հրկիզելոց ռուսական զետեպանատան մէջ տրուած նուագահանգիսի արգիւնքն եւս եղած է 500 ոսկի:

— Կ'ըսուի թէ Պ. Վանտէրպիլդ մայրաքաղաքս գտնուած միջոցին, ասիական երկաթուղեաց շինութեան խնդրովն զբաղեր եւ խոստացեր է Եւրոպայէն անցած միջոցին, գրամատեարց խումբ մը կազմելու հոգ տանիլ:

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ ամենայն Հայոց Հայրապետ Վեհ. Տ. Ս. Մակար Կաթողիկոսի անուան տօնախմբութեան առթիւ շնորհաւորական հեռագիր մ'ուղղած էր Ն. Վեհափառութեան:

Արդ, Վեհ. Հայրապետն՝ հեռագրաւ պատասխանելով Ամեն. Ս. Պատրիարք Հոր շնորհաւորութեանց, իւր գոհունակութիւնն յայտնած եւ օրհնած է Կեղրոնական Վարչութեան արգիւնաւոր ջանքերն եւ Թուրքիոյ համայն Հայ ժողովուրդը:

— Զմիւռնիոյ գաւառական ընդհ. ժողովն շաբաթ օրը հեռագիր մը ուղղելով ի Պատրիարքարան կը ծանուցանէր թէ, թէ եւ իւր ուրբաթ աւուր նստին մէջ միաձայնութեամբ մերժած է տեղւոյն Ս. Առաջնորդի հրաժարականն, եւ յատուկ պատգամաւորութեան մը միջոցաւ խնդրած է Ն. Գեորգիատուութեանն որ ետ առնու զիւր հըրաժարական, սակայն Ս. Առաջնորդը պընդած լինելով իւր հրաժարականին վրայ՝ գաւառական ժողովն յետ խորհրդակցութեան ընդուներ է Տ. Մելքիսեդեկ Եպիսկոպոսի հրաժարականն եւ որոշեր է յանձնարարել տեղւոյն Խառն ժողովին որպէս զի առ ժամայ տեղապահ մը կարգէ: Գաւառական ժողովն ի վերջոյ կը խնդրէ Պատրիարքարանէն՝ առաջնորդական ընտրութեան հըրահանգ եւ ընտրելաց ցանկ մը զրկել:

— Երկուշաբթի օրը Եկեղեցական պատգամաւորութիւն մը ներկայանալով Կրօնական Ժողովոյն, մատոյց հանրագիր մը զոր ստորագրած են հինգ եպիսկոպոսք եւ վաթսունէ աւելի վարդապետք եւ քահանայք: Այդ հանրագրով Եկեղեցական հարը կը բողոքեն Մելքիսեդեկ Եպիսկոպոսի հակազգային ընթացքին դէմ:

— Լ. Հէրբէր հետեւեալ կերպիւ կը ծանուցանէ Իզմիրի Գեր. Առաջնորդին հրաժարումն:

«Իզմիրի Հայոց առաջնորդ Մելքիսեդեկ Եպիսկոպոս հրաժարական տուած է, անցկերակի օր քաղաքին եկեղեցւոյն մէջ ժողովրդեան կողմէ իրեն դէմ եղած ցոյցի մը պատճառաւ: Կ'ըսուի թէ այդ եպիսկոպոսը Եկեղեցւոյ կանոնաց հակառակ շարժեր է, ի մէջ այլոց հանել տալով տեղւոյն ազգային գերեզմանատան մէկ մասին ոսկերտիքը, որպէս զի շէնքեր շինուին անդ: Գում-Գաբուրի Պատրիարքարանը մտադիր է համար պահանջել Մելքիսեդեկ Եպիսկոպոսէ իւր այս ընթացքին համար»:

— Ամեն. Խորհմեան Հայրիկ երկու շաբաթ է ի վեր անկողնոյ կը ծառայէ Գուգ. Կունճուքի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն տան մէջ:

— Վանայ Պատրիարքական Փոխանորդ Ալէաթճեան Գեր. Գրիգորիս Եպիսկոպոս նամակաւ մ'ուղղեալ ի Պատրիարքարան, կրկին անգամ հրաժարական տուած էր իւր պաշտօնէն: Կրօնական Ժողովը նկատողութեան առնելով զայդ գիր, յանձնարարեց Պատրիարքական Փոխանորդ Գեր. Գէորգ վարդապետին՝ որպէս զի մտերմական կեր-

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿՐ ՅԱՆՁՆԱՐԱՐՆԵՐ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՈՏԱԻՏ ՆԻԻԹԵՐԸ Eau de Cologne
 Impériale. Sapoceti, օճառ արգելադրողի համար. Ambrosial cream, օճառուտ գույն ամիլ-
 Լույ մարդու համար. Crème de Fraises մորթի կակուղցնելու համար. Poudre de Cypris
 զովացնելու եւ ձերմկցնելու համար մորթի. Stilboideֆայլ տալու համար մազերուն եւ մորու-
 քին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat
 de Cochlearia ախալցնելու համար. Eau de Chypre արդու զարդի համար. Թաշկինակի հա-
 մար հոտաւէտ Նիւթեր. Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Ma-
 rie Christine. Imperial Russe.

պիւ խնդրէ Ն. Գերապատուութենէն շա-
 րունակել իւր պաշտօնը :

— Ատա Բաղարէն ցաւօք կը ծանուցա-
 նեն մեզ թէ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ
 բազանայնէն Արժ. Տ. Վահան եւ Տ.
 Ներսէս նորընծայ բազանայք կարճ ժամա-
 նակի մէջ իրարու ետեւէ վախճաններ են :
 Երկրքին հանրուցեալք եւս աղիւ ու բա-
 րի եկեղեցականներ էին, իրենց հոգեւոր
 կոչման զլսովին արժանի :

ՓԱՌԱԿԱԶՄ ՕՐԱՅՈՅՅՔ

Կուզէ՞ք ունենալ Նոր Տարւոյն համա-
 ոտ եւ ընդարձակ Օրացոյցն, պարզ կամ
 ոսկեզօծ, թաւշեայ կամ մետաքսեայ, նախ-
 շուն, ընթուշ ու փառաւոր :

Կաղանկի համար կաշեկազմ, ոսկեզօծ
 եւ զարդարուն աղթագիրքեր : Պատի 0
 րացոյցներ մեծագիր կամ մանրիկ :

Դիմեցէք Չարմաքճրար-Եօղուշ, թիւ 51
 վ. Արսլանեան եւ Եղբարց զբաղուեն :

Գաւառական յանձնարարութիւնք խը-
 նամով կը կատարուին : 1554 2—7



ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍՏԱՆԲՈՒԼԵԱՆ ԸՆԿ.
 Ընդարձակ առեւտուր գաւառաց հետ

Ձինէ եւ ձապէ ուղղակի բեռցած
 Կերքնախի եւ ամեն հաշակի յարմար բեյք

ԳՆԵՐ ԶԱՓՈՒՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ

Փորձը ամեն գովեստէ լաւագոյն պիտի
 հաստատէ հինգ տարիէ ի վեր սոյն վաճա-
 րատան ըրած գնչու թիւնքն յաճախորդները
 գոհացնելու համար :

Պահճէ Գարու Ճէլալ պէյ խանի
 զբան կից թիւ 10

1000 60—78

ՆՈՐ ՏԱՐԻ

Կ Ա Մ

ՓՈՔՐԻԿ ԾԱՂՔԱՔԱՂ

ՀԱՏԸՆՏԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՅ

Հաստից

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԵՆԵԱՆ

Ազգային հին և նոր բանաստեղծներու
 գողտրիկ քերթուածներէն յօրինուած է
 այս փունջ, որ Կաղանդի առթիւ, որպէս
 ամեն ժամանակ, մանկանց նուիրելու յար-
 մար գրքոյ մ'է :

Կը գտնուի բոլոր հայ գրավաճառաց
 քով ի գին 100 փարսյ : 1555 2—5

ԱԶԴ

Խախտնալ Մահու զաւելաւթերթի
 արտօնատէր Դէորդ Էֆէնտի Այվազ-
 եան՝ Միտիլլիէն ընտիր ձիթաիւղ և
 օճառ, Թէնոտոսէն պատուական գինի
 և իզմիրէն ընտիր օղի բերել տուած է,
 և աժան գնով կը վաճառէ Ղալաթիա
 Բէնշէնպիհ-բազար, Իփսի խան :

Մինչեւ ցարդ Այվազեան Էֆէնտի
 յիշեալ վաճառատունը դիմողք յով-
 դոհ եղած են ապրանայ ընտիր տե-
 սակէն և գնոց չափաւորութենէն :

Այս օրերս լաւագոյն ապրանքներ
 հասած են : 1318 9—15

Վասն Արտօնատեան
 Տնօրէն-Պատասխանատու
 Բ. ՏԱՄՍԵԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼԻՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԵՏԵՍ՝ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆԻ

ԵՇԼԵՐԷՆՈՒՆՈՒՄ ՄԵՐՈՒՆՈՐԴՈՐԸ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ
 կուտայ : Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը :
 Գլխու թեփը շուտ մը անկրկնելի կ'ընէ : Իր անուշ
 հոտը առատ է ու հեշտալի :

“Մէկ շէշը կը բաւէ :” Եւ փորձը ունեցան
 ամենքը որոնցմոխրագունած մազերը իրենց բնական գոյ-
 նին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան :
 Նին դարձան : Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր
 զործներու և անգղիացի գեղագործներու քով :

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row).
 “Լոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք : Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղա-
 գործներու և անգղիացի գեղագործներու քով :

Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբարց բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ
 փողոց, Էտմընտ ֆարուան, Անգլիական միջերանոց, Նիւքէք Գալտըրըմ, և Իզի-
 ւոր Լադանտէլլա 455, Բերա Մեծ փողոց :

ՀԵՐՄԵՆԵԿԸՆ ԾԱՂԿԵՓՈՒՆՔ

ԳԵՂԵՑԿԵՑՈՒՆՈՐ ՄԵՐՄՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ
 ԾԱՂԿԵՓՈՒՄ, ՄԻՇՏ ԹԱՐՍ :



Լնգամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ
 գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ և բազմաթիւ փոշի-
 ներէ : Եռաջին անգամ գործածելով ալ, որ քանի
 մը վաղրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ
 երեսը, վիզը, թեւերը և ձեռուները պիտի առ-
 նուն անոյշ փափկութիւն մը և մարմարիտի
 փայլ հանդերձ շուշանի և վարդի գունով և
 բուրմամբ : Սպորնի գրգռիչ յատկութիւնները
 բուրմամբ : Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղա-
 գործներու և անգղիացի գեղագործներու քով :

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). “Լոյնպէս
 Բարիզ ու Նիու Եօրք : Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղա-
 գործներու և անգղիացի գեղագործներու քով :

Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբարց բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ
 փողոց, Էտմընտ ֆարուան, Անգլիական միջերանոց, Նիւքէք Գալտըրըմ, և Իզի-
 ւոր Լադանտէլլա 455, Բերա Մեծ փողոց :



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒՆ

ՄԷԼԸՐՈՑ

ՄԵՐՈՒՆՈՐ ՄԵՂԻ ՀԵՏԻԿ ՆՈՐՈՒՄ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմըկած կամ գունաթափ
 մազերը : Կը դադրեցունէ անոնց թափելը : Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ
 թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ :
 Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շէշերու մէջ :
 Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa Apton Row). “Լոյնպէս
 Բարիզ ու Նիու Եօրք :

Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբարց բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ
 փողոց, Էտմընտ ֆարուան, Անգլիական միջերանոց, Նիւքէք Գալտըրըմ, և Ի-
 զիւոր Լադանտէլլա 455, Բերա Մեծ փողոց :

